ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարուածք։ Ամենայն ինչք և ստացուածք մեր ի ձեռս քո, և մարմինք մեր առաջի քո կան, ըստ կամաց քոց արա՛ զինչ և կամիս։ Եթէ սովին հաւատովք թողուս, ոչ յերկրի այլ տէր փոխանակեմք ընդ քեզ, և ոչ յերկինս այլ Աստուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի, որ չիք այլ Աստուած բայց ի նմանէ։ Ապա եթէ յետ այսր մեծի վկայութեան այլ ինչ հարցանես, աւասիկ կամք, զբոլոր մարմինն տուեալ ի ձեռս քո. վաղվաղակի արա՛ զինչ և կամիս։ Ի քէն տանջանք, և ի մէնջ յանձնառութիւնք. սուր քո՛ և պարանոցք մեր։ Չեմք ինչ լաւ մեք քան զառաջինսն, որ յայսր վկայութեան վերայ եդին զինչս և զստացուածս և զմարմինս իւրեանց։

Զի եթէ անմահք իսկ էաք, և մարթ էր մեզ մեռանել վասն սիրոյն Քրիստոսի, արժան էր. քանզի և նա անմահ էր, և այնչափ սիրեաց զմեզ, մինչև մահ ի յանձն էառ. զի և մեք նորա մահուամբն յաւիտենական մահուանէն ապրեսցուք։ Եւ եթէ նա յիւր յանմահութիւնն ոչ խնայեաց, մեք զի կամօք եղաք մահկանացուք, կամօք մեռցուք վասն սիրոյ նորա, զի կամօք յանձն առցէ զմեզ յիւր յանմահութիւնն. մեռցուք իբրեւ զմահկանացուս, զի ընկալցի զմեր մահն իբրեւ զանմահից։

Այլ դու յայսր ամենայնի այլ զմեզ մի՛ հարցաներ. զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց, եթէ պատրիցիմք իբրեւ զտղայս. այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակել և ի բաց ելանել, ոչ այժմ և ոչ յապա և ոչ յաւիտեանս և ոչ յաւիտենից յաւիտեանս։

Եղիշէ, Բ. յեղանակ։

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս հաւատքէն մեզ ո՛չ ոք կրնայ խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր, ո՛չ ջուր, և ոչ ալ ո՛ր և է դառն հարուած։ Մեր ամբողջ գոյքը և ստացուածքը քու ձեռքդ է, և մեր մարմինները ահա՛ քու առջեւդ, կամքիդ համաձայն ըրէ՛ ինչ որ կ'ուզես։ Եթէ այս հաւատքին մէջ թողուս մեզ, երկրի վրայ ուրիշ ո՛չ մէկ տէր կ'ընդունինք քեզմէ զատ, և երկինքի մէջ ոչ մէկ Աստուած՝ բացի Յիսուս Քրիստոսէն, որմէ զատ չկայ ուրիշ Աստուած։ Իսկ եթէ այս մեծ վկայութենէն յետոյ դեռ ուրիշ բան հարցնես, ահաւասիկ մենք պատրաստ ենք, մեր բովանդակ մարմինը տուած քու ձեռքդ, ըրէ՛ փութով ինչ որ կ'ուզես։ Քեզմէ տանջանք՝ մեզմէ յանձնառութիւն. սուրդ՝ և մեր պարանոցները։ Մենք լաւագոյն չենք քան մեր նախնիքները, որ այս հաւատքին համար զոհեցին իրենց գոյքերը և ստացուածքը և մարմինները։

Վասնզի եթէ անմահ իսկ ըլլայինք, և հարկ ըլլար մեռնիլ Քրիստոսի սիրոյն համար՝ կ'արժէր. որովհետեւ Նա՛ ալ անմահ էր, բայց այնչափ սիրեց մեզ՝ որ մինչեւ անգամ յանձն առաւ մահը, որպէսզի անոր մահով ազատինք յաւիտենական մահէն։ Եւ եթէ նա չխնայեց իր անմահութեանը, մենք որ մեր կամքովը մահկանացու եղանք՝ մեր կամքով ալ մեռնինք Անոր սիրոյն համար, որպէսզի Նա ալ կամովին ընդունի մեզ իր անմահութեան մէջ. մեռնինք իբրեւ մահկանացուներ՝ որպէսզի Նա մեր մահը համարի իբրեւ մահ անմահներու։

Այս բոլորին մասին դուն այլ եւս մի՛ հարցըներ մեզ, որովհետեւ մեր հաւատքի ուխտը ո՛չ թէ մարդու հետ է՝ որ մանուկներու նման խաբուինք, այլ անլոյծ կերպով Աստուծոյ հետ, զոր չէ կարելի քակել և լքել ո՛չ այժմ և ո՛չ յետոյ, ո՛չ յաւիտեանս և ո՛չ ալ յաւիտենից յաւիտեանս։

Եղիշէ, Բ. յեղանակ։

© National Library of Armenia